**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) ընդունմամբ կատարվում են մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են բանկային և ապահովագրական համակարգերի կարգավորմանը, վերահսկողության դաշտի համապատասխանեցմանը միջազգային պահանջներին, մասնավորապես՝ նախատեսվում է սահմանել.

- հիմնական տնտեսական նորմատիվների սահմանային հարաբերակցությունից բարձր (ցածր) սահմանային թույլատրելի շեմ,
- լևերիջի գործակից, որի նպատակն է սահմանափակել տրված կապիտալի մակարդակի պայմաններում բանկերի կողմից չափազանց մեծ ծավալների ներգրավում,
- ավելի խիստ պահանջներ՝ համակարգային նշանակություն ունեցող բանկերի կապիտալի համարժեքության նկատմամբ,
- նորմատիվների ցանկում ավելացնել պարտավորության և եկամտի, պահանջի և գրավի հարաբերակցությունների առավելագույն չափերի սահմանման հնարավորություն՝ որպես՝ համակարգային ռիսկի զսպման գործիքներ,
- կյանքի ապահովագրության պորտֆելի փոխանցման դեպքում ապահովադիրների առարկությունների ներկայացման ընթացակարգ,

- ապահովագրության պայմանագրերի կնքման, փոփոխության, պայմանագրերի սպասարկման գործընթացի, ինչպես նաև ապահովագրական միջնորդների և գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջներ:

Նախագծերով կարգավորվող շրջանակներն առնչվում են բանկային համակարգում գործող վարկային և ապահովագրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների շուկայի հետ, սակայն Նախագծերի ընդունմամբ նշված շուկայում մրցակցային դաշտի վրա զգալի ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքներն՝ արձանագրվել է Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *զգալի ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ



ԳԱՌՆԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ